կինի կողմից մի նամակ եւ ընծաներ տանելով Ղուկաս կաթողիկոսին ,ինչպէս նաեւ նամակներ Յովհ. Լազարեանից եւ Մանուչարեանից2) :

Բայց կաթողիկոսը, անշուշտ վախենալով Էջմիածնի եւ հայ ժողովրդի գլխին նոր աղէտներ բերելուց, շատ զգոյշ վերաբերուեց Պետերբուրգի առաջարկին եւ խոյս տուեց որեւէ գործնական քայլ անելուց :

Նոյն այդ զգուշութիւնը, շատ զգոյշ կերպով, թելադրեց նաեւ Արղութեանին : Յայտնելով նրան բժ. Բէյնէգոսի Էջմիածին հասնելու մասին, կաթողիկոսը իր 1793 թ. Յունուար 17 նամակով գրում է. «Ինչ որ գօկտօրը բերանացի ասելու էր մեզ՝ ասաց եւ լիովին խմացանք եւ ճանապարհ դրինք, տալով այս թուղթը : Եթէ պատահես իրեն, խմացի՛ր թէ ի՛նչ պիտի խօսես, ի նկատի առնելով ներկայիս մեր պայմանները» :

Ղուկաս կաթողիկոսի այս զգուշաւոր ընթացքը, ինչպէս երեւում է, զայրոյթ առաջացրեց այն բոլոր խաւերում, որոնք հաւատալով ռուսական խոստումներին, ոգեւորուած էին Հայաստանի ազատութեան գաղափարով : Անդամ հեռաւոր Հնդկաստանից դժգոհութիւններ հասան կաթողիկոսի ականջին եւ նա մէկ ընդարձակ նամակով մեծահարուստ Շահամիրեանին բացատրում է իր վարմունքի շարժառիթները :

Նամակն ունի պատմական մեծ նշանակութիւն, ուստի մի քանի քաղուածքներ բերում ենք թարգմանաբար1) .—

«Գրած էիր ինձ, որ մեր ազգի եւ աշխարհի ազատութեան մասին հոգ տանեմ եւ յիշատակած էիր այդ նպատակին ծառայող մի քանի միջոցներ : Խօսքերդ քո ջերմ ազգասիրութեան եւ ազգի մասին ունեցածդ հոգածութեան ապացոյց են : Երանի՜ թէ դրանք գոնէ մասամբ իրագործելի լինէին :

«Դրա համար սակայն անհրաժեշտ է, որ մեր ազգը հաւատացեալների եւ բարեկամների իշխանութեան ներքոյ գտնուէր եւ ապահովութիւն վայելէր, որպէսզի կարողանայինք նրանց օգնութեամբ երջանկութեան թեկնածել : Բայց ահա անողորմ թշնամիների վայրագութեան ենք մատնուած եւ քանի որ նոյնիսկ հաւատարիմ ծառայութեամբ անկարող ենք գթութիւն գտնել նրանցից, ի՜նչ կը լինէր, եթէ մենք անհնազանդութիւն ցոյց տայինք :

Առ այս դու կ'ասես, թէ մեզ հաճելի է ըստրկանալ անօրէններին եւ մենք ազատութիւն սիրող չենք : Սակայն օրհնեա՜լ որդի, եթէ դու մեր երկիրը գայիր, Նոր Ջուղայից մինչեւ այստեղ եւ ուրիշ կողմերը չրջէիր, ուր որ ապրում են մերայինք, աչքերովդ կը տեսնէիր նրանց թշուառ դրութիւնն ու իշխողների բռնութիւնը եւ անձամբ կը համոզուէիր, որ այդ դիտումները չեն կարող իրագործուել եւ եթէ իրագործելի լինէին, մի՞թէ այնքան յիմար ենք, որ չկամենայինք տառապանքներից ազատուել :

Թւում է, թէ ոմանք ըստ հաճոյից խօսելով, թէ այսինչ եւ կամ այնինչ կողմից օգնութիւն կը հասնի մեզ, մոքերիդ վրայ ազդել են ... Հաւատաւ խմացիր, որ այժմ ոչ հիւսիսային տէրութիւնից մեզ օգնութիւն կը հասնի, ոչ էլ ուրիշներից :

պէս արքայի անձնական բժիշկ : Այնտեղից մեկնեց Պետերբուրգ եւ մի տեղեկագիր ներկայացրեց Պօտեմկինին Վրաստանի դրութեան մասին : Մօտիկ մասնակցութիւն ունեցաւ Վրաստանը Ռուսաստանի հովանաւորութեան տակ ընդունելու բանակցութիւնների մէջ : Յետոյ նորից վերադարձաւ Վրաստան՝ որպէս Ռուսաստանի ներկայացուցիչ : Ընդհանրապէս մեծ դիրք ունէր ռուս բարձր պետական շրջաններում եւ մի շարք կարեւոր յանձնարարութիւններ է կատարել. (Կ. Եղեան՝ «Ս. Էջմիածնի Յարաբերութիւնները», եր. 25) :

2) Մանուչարեանները բնիկ Երեւանցի էին, ազնուական : Շահ Աբբաս նրանց էլ տարագրում է Պարսկաստան, հաստատելով նրանց ազնուականութիւնը : Հետագայում անցնում են Ռուսաստան եւ բնակւում Պետերբուրգում : Մարգար եւ Փիլիպպոս Մանուչարեանները, իրենց խորհուրդներով եւ աջակցութեամբ, հանդիսանում են Արղութեանի գործակիցները : Ղուկաս կաթողիկոսը, իր 1780 թ. Նոյեմբ. 21-ի կոնդակով, շնորհակալութիւն յայտնելով այդ տոհմին իր օգտաշատ ծառայութեան համար, վերահաստատում է ազնուականութեան մէջ. («Դիւան Հայոց Պատմ.», Դ. Գիրք, եր. 516) :